ՀՊՏՀ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ելույթը «Էրասմուս +» ծրագրի ներկայացմանը

Կրթության և գիտության հարգարժան պարոն նախարար

Հարգելի՛ հյուրեր, ներկաներ

Մեզ համար մեծ պատիվ է հյուրընկալել ձեզ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ «Էրասմուս պլյուս» ծրագրի տեղեկատվական հանդիպման շրջանակներում:

Շնորհակալ ենք Հայաստանում «Էրասմուս պլյուսի» ազգային գրասենյակին՝ միջոցառումը մեր համալսարանում անցկացնելու համար, միևնույն ժամանակ հպարտ ենք, որ այս կարճ ժամանակահատվածում մեր համալսարանը «Էրասմուս պլյուսի» Գործողություն մեկի շրջանակներում կարողացել է որոշակի հաջողությունների հասնել:

Այսօր համալսարանների միջազգայնացման ճանապարհին իր ուրույն տեղն է զբաղեցնում ուսանողների և աշխատակիցների շարժունությունը: Այն իր որոշիչ դերն ունի համալսարանների վարկանիշավորման մեթոդաբանությունում: Եվ քանի որ մեր համալսարանի համար միջազգայնացումը կարևորագույն ուղղություններից մեկն է, մենք ևս անմասն չմնացինք այս

գործընթացից, որը թեև դժվար էր, բայց կարևոր: Արդյունքում մենք գտանք գործընկեր համալսարաններ, որոնք պատրաստ են համագործակցել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հետ:

Մեր համալսարանը ծրագրի Գործողություն մեկին դիմեց 2014 թվականին: 2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում մենք կարողացանք ծրագրի շրջանակներում եվրոպական գործընկեր համալսարաններ ուղարկել 15 ուսանող, 9 դասախոս և 2 վարչական աշխատակից: Գործընկեր համալսարաններից նույնպես ընդունել ենք դասախոսների ու ուսանողների և մինչև կիսամյակի ավարտը նախատեսված այցեր ունենք, որի արդյունքում ՀՊՏՀ-ում 1 ուսանող, 8 դասախոս և 2 վարչական աշխատակից իրականացրած կլինեն իրենց շարժունության ծրագիրը: Գործընթացի մեկնարկը թեև դժվարին էր, բայց այդ դժվարությունները հաղթահարվում են, իսկ ֆինանսավորված ծրագրերի քանակը թույլ է տալիս ասել, որ հաջորդ կիսամյակում հնարավոր կլինի նույնչափ շարժունություն ապահովել:

Շարժունության ծրագրերը չափազանց կարևորում ենք. դրանք ուսանողներին հնարավորություն են տալիս վերադառնելով հյուրընկալող համալսարաններից՝ սեփական օրինակով ոգևորել իրենց ընկերներին, դառնալ ինքնուրույն, որոշումներ կայացնողներ՝ զինված նոր հմտություններով, բարելավված օտար լեզվի իմացությամբ: Դասախոսների համար նույնպես սա փորձի փոխանակման լավ առիթ է: Մինչ այս պահը մեկնած մեր 9 դասախոսները հյուրընկալող համալսարաններում արժանանացել են հատուկ գովասանքի: Վարչական աշխատակիցների համար՝

վերապատրաստվելու, նոր գործընկերներ ձեռք բերելու և եվրոպական բուհերի աշխատանքին ծանոթանալու հիանալի հնարավորություն է: Իհարկե, ուրախալի է, որ մեր համալսարան ժամանած ուսանողները, դասախոսներն ու աշխատակիցները նույնպես գոհ և հիմնականում կրկին վերադառնալու ցանկությամբ են հեռանում:

Ավարտելով ելույթս՝ ցանկանում եմ նշել, որ դեռ անելիքներ շատ ունենք, հատկապես կրեդիտների փոխճանաչման առումով, բայց վստահ եմ, որ մոտ ապագայում մեր համատեղ աշխատանքի ու ջանքերի շնորհիվ այս խնդիրները ևս կհաղթահարենք: Բոլորիս մաղթում եմ արդյունավետ աշխատանք:

Շնորհակալություն ուշադրության համար:

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ